Ա. Գ. ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՃԱԿԱՏԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1978—1979 ԹԹ. ԻՐԱՆԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆԸ

1978—79 թթ. իրանական հեղափոխությանն Ազգային ճակատ կազմակերպության մասնակցության հետ առնչվող հարցերի ուսումնասիրությունն ու լուսաբանումը չափազանց կարևոր է հեղափոխության շարժիչ ուժերից յուրաքանչյուրի տեղի ու դերի որոշման համար։

Իրանի ազգային բուրժուազիայի քաղաքական կազմակերպությունը՝ Ազգային ճակատը պայքարի մեծ փորձ ուներ։ Այն հիմնվել էր դեռևս ետպատերազմյան տարիներին Իրանում ծավալված ազգային-ազատագրական շարժման վերելքի շրջանում՝ 1949 թ.[1], ազգային բուրժուազիայի նշանավոր գործիչ Մուհամմադ Մոսադեղի նախաձեռնությամբ և վճռական դեր էր խաղացել Իրանի նավթարդյունաբերության աղգայնացման գործում։ 1953 թ. օգոստոսի 19-ին՝ տեղական հետադիմական շրջանների և օտարերկրյա, հատկապես ամերիկյան իմպերիալիստների համատեղ ջանքերով Իրանում կազմակերպված պետական հեղաշրջումից և գեներալ Ֆ. Զահեդիի ռեժիմի հաստատումից հետո Ազգային ճակատն ամենադաժան ճնշումների ենթարկվեց և, փաստորեն, դադարեցրեց իր գործունեությունը։

Ազգային ճակատի վերածնման համար երկրում նպաստավոր իրադրություն ստեղծվեց 60-ական թվականների սկզբներին, երբ ներքին հակասությունների ծայրահեղ սրման պայմաններում Իրանի Մուհամմադ Ռեզա Փեհլևի շահը հարկադրված էր վերանայել իր տնտեսական, սոցիալական և քաղաքական ըմբռնումները և որոշ զիջումների դիմել։ Ի հետևանք, ազգային բուրժուազիայի ուժերը հնարավորություն ստացան կարճ ժամանակով վերահամախմբվել այսպես կոչված Երկրորդ Ազգային ճակատում (Քարիմ Սանջաբիի գլխավորությամբ) և առաջ քաշել «ոչ հակամիապետական, բայց սահմանադրական»[2] կազմակերպությանը բնորոշ պահանջներ, որոնք հան-

գում էին սահմանադրական միապետության շրջանակներում բուրժուադեմոկրատական ազատությունների պահպանման[3]։

1963 թ. հունիսին սակայն, ռեակցիայի սաստկացման պատճառով Երկրորդ Ազգային ճակատն ստիպված եղավ անցնել ընդհատակ։

1978—79 թթ. իրանական հեղափոխության նախօրեին երկրում ստեղծված որոշակի քաղաքական իրադրության պայմաններում Ազգային ճակատը, ինչպես և պետք էր սպասել, ասպարեզ ելավ, և ամենաակտիվ գործունեություն ծավալեց։ Նախկինում Ազգային ճակատի ճանաչված գործիչներից մի քանիսին հաջողվեց 1977 թ. նոյեմբերի 19-ին հիմնել Երրորդ Ազգային ճակատը[4], որի կազմի մեջ մտան Ազգային շարժման սոցիալիստական լիգան՝ Քարիմ Սանջաբիի ղեկավարությամբ, Իրան կուսակցությունը՝ Շահփուր Բախթիարի ղեկավարությամբ, Իրանական ազգի կուսակցությունը՝ Դարիուշ Ֆորուհարի ղեկավարությամբ և մի շարք պրոֆեսիոնալ միություններ ու խմբեր, ինչպես՝ Մարդու իրավունքների Միությունը, Իրանական ազատության շարժումը, փաստաբանների միությունը և այլն։

Ազգային ճակատի վերակազմավորումն այս անգամ հնարավոր դարձավ ռեժիմի այսպես կոչված «լիբերալացման քաղաքականության» անցնելու հետևանքով, որը շահին պարտադրել էր ԱՄՆ-ի պրեզիդենտ Ջ. Քարտերը՝ ելնելով ստեղծված իրադրության մեջ շահի իշխանությունն ամեն կերպ պահպանելու Միացյալ Նահանգների անմիջական շահագրգռությունից և օգտագործելով մարդու իրավունքների պաշտպանության իր հանրահայտ դեմագոգիկ թեզը։

Օգտվելով առիթից, Ազգային ճակատը, որը կողմնակից էր «էվոլյուցիայի, և ոչ հեղափոխության»[5], առանց հապաղելու բաց նամակ հղեց շահին, որտեղ շարադրված էին պառլամենտը, ինչպես նաև պրոշահական, երկրում միակ օրինական «Ռաստախիզ-ե մելլի» («Ազգային վերածնունդ») կուսակցությունը լուծարքի ենթարկելու, բոլոր ընդդիմադիր կուսակցություններին և կազմակերպություններին ազատ գործունեության հնարավորություն տրամադրելու և այլ պահանջներ։ Բաց նամակին հետևեցին նույնանուն բովանդակությամբ մի ամբողջ շարք հանրագրեր[6]։

Չնայած Ազգային ճակատի կազմի խայտաբղետությանը, որը, բնականաբար, ենթադրում էր նրա մեջ մտնող տարբեր կուսակցությունների, խմբերի և առանձին գործիչների տեսակետների և նպատակների անխուսափելի տարբերություն, երբեմն նաև բացարձակ

հակադրություն, այսուհանդերձ, ինչպես վկայում են 1977 թ. դեկտեմբերին կազմակերպության ընդունած ծրագիրը և անմիջապես նրա գործողությունները, այս շրջանում Ազգային ճակատի հիմնական պահանջները հստակ էին և դարձյալ սահմանափակվում էին սահմանադրական միապետության շրջանակներում դեմոկրատական իրավունքների ձեռքբերմամբ[7]։

Դեպքերի հետագա զարգացումը և մեկուսացման հնարավորության հանդեպ ունեցած վախը, սակայն, հարկադրեց Ազգային ճակատին ընտրել գործունեության միանգամայն այլ ոճ, և, հրաժարվելով նամակներով ու հանրագրերով երբևէ հաջողության հասնելու հույսից՝ միանալ ժողովրդական շարժմանը, որն օրըստօրե ավելի էր ընդարձակվում։ Մանավանդ, որ նա իրեն դաշնակից գտավ բարձրաստիճան հոգևոր ղեկավարների շրջանում՝ ի դեմս այաթոլլա Շարիաթ-Մադարիի, որը նույնպես հակված էր համաձայնողականության, և բավարարվում էր սահմանադրական միապետության հաստատմամբ։ Ի դեպ, այս դաշնակցությունը լրջորեն հավակնում էր ժողովրդական շարժման ղեկավարի դերին։ Սակայն շատ շուտով ակնհայտ դարձավ նրա քաղաքական գծի անհեռանկար լինելը։ Երկրում տեղի էր ունենում ուժերի ծայրահեղ բևեռացման պրոցես. հակադրվելով շահի ստեղծած զինվորական կառավարությանը՝ ժողովուրդը կենտրոնացել էր արտասահմանում գտնվող այաթոլլա Խոմեյնու միահեծան ղեկավարության տակ, Խոմեյնու, որը չէր դադարում կրկնել, որ հաստատ է շահի ռեժիմը տապալելու սկզբունքին, և որ շահի կողմից հովանավորվող որևէ կառավարության կազմումը դավաճանություն կլինի հեղափոխությանը։

Հեղափոխական իրադարձությունների զարգացման որոշակի փուլում քաղաքական իրադրության այսպիսի փոփոխությունը դրդեց Ազգային ճակատին հիմնովին վերափոխել իր դիրքորոշումը։ Այլևս անկասկած էր, որ շահի ռեժիմի տապալման հավանականությունը ավելի քան իրական էր դառնում և Ազգային ճակատին լուրջ վտանգ էր սպառնում հեղափոխության հաղթանակի դեպքում անմասն մնալ իշխանությունից։

Անհրաժեշտ էր Խոմեյնու հետ որևէ ձևով համաձայնության գալ։ 1978 թ. հոկտեմբերի վերջերին Ազգային ճակատի ղեկավար Քարիմ Սանջարին շտապեց Փարիզ[8]։ Նա թաքուն հույս ուներ համոզել Խոմեյնուն քաղաքացիական պատերազմից խուսափելու համար գրավել

նվազ անհամաձայնողական դիրքորոշում (որն, ըստ երևույթին, ի նկատի ուներ Մուհամմադ Ռեզա շահի տապալումն առանց Իրանում միապետության վերացման ընդհանրապես)։ Սակայն տեղի ունեցավ հակառակը։ Փարիզից վերադառնալուց հետո Սանջաբին հայտարարեց Խոմեյնու հետ իր կատարյալ համաձայնության մասին, և հատկապես ընդգծեց, որ չի մտնի որևէ կառավարության կազմի մեջ այնքան ժամանակ, քանի դեռ երկրում կպահպանվի միապետությունը[9]։

Ավելորդ չէ նշել, որ Սանջաբիի՝ սահմանադրական միապետության գաղափարից հրաժարվելու և միապետության տապալման գաղափարն ընդունելու փաստն առիթ տվեց Ազգային ճակատի պառակտման։ Իրան կուսակցության ղեկավար Շահփուր Բախթիարն, օրինակ, որն առավել բուռն էր արտահայտում իր դժգոհությունը, մեղադրում էր Սանջաբիին այն բանում, որ վերջինս, իբրև, «մեծ զիջման էր գնացել՝ առանց որևէ բան շահելու»[10], և որ «...սահմանափակել էր հետագա մանևրման հնարավորությունը»[11]։

Այնուամենայնիվ, չնայած առկա տարաձայնություններին, Ազգային ճակատն այժմ գործունեության հիմնական նպատակ ընտրեց հետևյալ խնդիրների իրականացումը. միապետության վերացում, իսլամի վրա հիմնված կառավարության ստեղծում և պետության ապագա կառուցվածքի որոշման նպատակով հանրաքվեի անցկացում[12]։

Ազգային ճակատի այսպիսի սկզբունքային վերակողմորոշումը, որն սկիզբ դրեց նրա գործունեության նոր փուլին, միաժամանակ, շրջադարձային եղավ հեղափոխության ընթացքի համար և մեծապես որոշեց նրա ճակատագիրը։

Ազգային ճակատի նոր, անսպասելի դիրքորոշումը չափազանց բարդացրեց շահի վիճակը։ (Նրա հանձնարարությամբ 1978 թ. նոյեմբերի 5-ին գեներալ Ազհարին կազմեց զինվորական կառավարություն[13], որն առանց հապաղելու ձերբակալեց Փարիզից նոր վերադարձած Սանջաբիին և Ֆորուհարին[14]։ Որոշ ժամանակ անց, սակայն, ժողովրդական շարժման ճնշման տակ, ստիպված եղավ նրանց արձակել)[15]։

Այս կոնտեքստում իրանական իշխանությունների համար կենսական նշանակություն էր ստանում օպոզիցիային ինչ-որ ձևով ռեժիմի հետ հաշտեցնելու հարցը։ Ընդ որում, առավել իրականանալի էր դիտվում «քաղաքացիական» կոալիցիոն բուրժուական կառավարություն ստեղծելու գաղափարի իրականացումը։

Ապագա կառավարության մեջ ընդգիմադիր հիմնական կազմակերպության՝ Ազգային ճակատի մասնակցությունն ապահովելու դիտավորությամբ 1978 թ. դեկտեմբերի 14-ին շահը հանդիպում ունեցավ Սանջաբիի հետ[16]։ Սակայն վերջինիս դիրքորոշումն այս հարցում անվերապահորեն բացասական էր։ Հանդիպմանը հաջորդող իր պաշտոնական հայտարարության մեջ Սանջարին մեկ անգամ ևս նշում էր, որ Ազգային ճակատը հրաժարվում է մտնել որևէ կառավարության կազմի մեջ, քանի դեռ շահը գտնվում է իշխանության գլուխ[17]։

Հրաժարվելով, այնուամենայնիվ, քաղաքացիական կառավարություն ստեղծելու մտքից, որը, ստեղծված իրադրության պայմաններում միակ հուսադրող հնարավորությունն էր, Իրանի տիրող շրջաններն այն ղեկավարելու համար օպոզիցիայի շարքերից ռեժիմի համար ընդունելի թեկնածու էին որոնում։

Միացյալ Նահանգները, որը լրջորեն մտահոգված էր Իրանի իրավիճակով, և նրա սպասելի, իր համար ոչ ձեռնտու հեռանկարներով, ամեն կերպ ձգտում էր ազդել դեպքերի զարգացման ընթացքի վրա։ Հայտնի է, որ ԱՄՆ-ը պաշտպանում էր «քաղաքացիական» կառավարություն ստեղծելու միտքը, և նրա ներկայացուցիչներն ամենագործոն մասնակցությունն էին ցուցաբերում օպոզիցիայի «չափավոր» գործիչների հետ այդ կապակցությամբ տարվող խորհրդակցություններին։ Ամերիկյան ծրագրի բովանդակությունն այսպիսին էր. ելնելով Իրանի ազգային շահերից (ավելի ճիշտ՝ Միացյալ Նահանգների իմպերիալիստական շահերից), շահը պետք է ժամանակավորապես հեռանա Իրանից, իսկ նրա պարտականությունները հանձնվեն այսպես կոչված Բարձրագույն կոնսուլտատիվ խորհրդին, որի կազմի մեջ կմտնեն Իրանի հիմնական քաղաքական ուժերի ներկայացուցիչները՝ շահի ընտրությամբ։ Գործադիր իշխանությունը կհանձնվի «քաղաքացիական» կոալիցիոն կառավարությանը՝ օպոզիցիայի «չափավոր» թևի որևէ, առավել հարմար ներկայացուցչի գլխավորությամբ[18]։ Այս ծրագիրը, որի նպատակը ժամանակ շահելն ու միապետությունը փրկելն էր, իրականանալու դեպքում իրանական իշխանությունների համար բավական գրավիչ էր։ Սակայն այդ ուղղությամբ ձեռնարկված առաջին փորձն անհաջողության մատնվեց։ Ազգային ճակատի հայտնի գործիչներից մեկը՝ Ղոլամ Հոսեյն Սադեղին, որին Միացյալ Նահանգների խորհրդով հանձնարարվեց կազմել «քաղաքացիական» կառավարություն[19], և որն սկզբնապես տվել էր իր համաձայնությունը, ի վեր-

ջո հարկադրված եղավ հրաժարվել[20]։ Պատճառը ոչ միայն այն էր, որ նրան այդպես էլ չհաջողվեց համոզել օպոզիցիայի գործիչներին մտնել կառավարության կազմի մեջ, այլև, գլխավորապես Ազգային ճակատի դիրքորոշումն այս հարցում, որը վճռականորեն պահանջում էր շահի հեռանալը երկրից, և որին վերջինս համառորեն դիմադրում էր։ Նույն պատճառներով անհնարին եղավ նաև օպոզիցիայի մեկ այլ ներկայացուցչի՝ Մոզաֆֆար Բաղայիի կողմից կառավարության կազմումը[21]։

Ազգային ճակատն իր հայտարարություններում անընդհատ ընդգծում էր, որ պայքարը չի դադարեցնի, մինչև զինվորական կաբինետը հրաժարական չտա և շահը գահընկեց չարվի։

Ազհարիի կառավարությունը, որի գոյությունն արդեն միանգամայն անիմաստ և աննպատակահարմար էր դարձել, ստիպված էր հրաժարական տալ[22]։ Այս անգամ շահը, դարձյալ Միացյալ Նահանգների խորհրդով, հանձնարարեց կառավարություն կազմել Շահփուր Բախթիարին[23], օգտագործելով, անշուշտ, նաև Սանջաբիի հետ նրա բացահայտ տարաձայնությունների հանգամանքը, և թերևս, նաև այն, որ շահի անկեղծ խոստովանությամբ, այդ պահին Բախթիարը քաղաքացիական գործիչներից միակն էր, որ ընդունել էր նրա այդ առաջարկը[24]։

Ընդդիմադիր որոշ շրջանների աջակցությամբ Բախթիարը ձեռնամուխ եղավ իր ստանձնած միսիայի իրականացմանը։ Դրան անմիջապես հաջորդեց վերջինիս իր շարքերից վտարելու Ազգային ճակատի որոշումը[25]։ Հատկանշական է, որ նրա ղեկավարներից և ոչ մեկը հանդես չեկավ նոր կառավարության պաշտպանությամբ[26]։ Ազգային ճակատն այս անգամ ևս վճռականորեն հրաժարվեց մտնել կառավարության կազմի մեջ, և, ավելին, բոյկոտ հայտարարեց նրա գործունեությանը[27]։

Դեռևս 1979 թ. հունվարի 2-ին, ռադիոյով իր ելույթում Բախթիարը խոստանում էր գործող Սահմանադրության շրջանակներում ժողովրդի համար ապահովել իրավունքներ և ազատություններ, վերացնել մամուլի գրաքննությունը, ազատել քաղաքական բանտարկյալներին, թույլատրել քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների օրինական գործունեությունը։ Նա ժողովրդին կոչ էր անում անհապաղ դադարեցնել հակակառավարական ելույթներն ու գործադուլները[28]։

Շուտով, մեկ այլ առիթով, Բախթիարը հայտարարեց ՍԱՎԱՔ—ի գործունեությունը սահմանափակելու, մամուլի ազատությունը վերականգնելու և երկրում ռազմական դրությունն աստիճանաբար վերացնելու իր մտադրության մասին[29]։

Բախթիարի բացահայտ դեմագոգիկ խոստումների նպատակն, անշուշտ, երկրում օպոզիցիայի դիմադրությունն ինչ-որ չափով մեղմելն էր։ Անմիջապես դրան էր ուղղված նաև նրա այն հավաստիացումը, թե շահը մտադիր է ամենամոտ ժամանակներս հանգստի մեկնել արտասահման[30]։

Ի պատասխան, Ազգային ճակատը և ընդդիմադիր մյուս կազմակերպությունները հայտարարեցին, որ միապետության հարցում անհրաժեշտ է ընդունել արմատական որոշում, և որ միմիայն այդ դեպքում հնարավոր կլինի կայունացնել իրադրությունը[31]։

Հունվարի 11-ին Բախթիարը մեջլիսի հաստատմանը ներկայացրեց իր կառավարության կազմը և ապագա գործունեության ծրագիրը[32]։ Այն նախատեսում էր ցրել ՍԱՎԱՔ-ը, վերացնել ռազմական դրությունը, վերականգնել ժողովրդի քաղաքացիական իրավունքներն ու ազատությունները, արձակել քաղաքական բանտարկյալներին, անհապաղ պատասխանատվության ենթարկել հասարակական միջոցների կողոպտման և օրինախախտումների մեղավորներին։

Անդրադառնալով արտաքին քաղաքականության բնագավառին, Բախթիարը հայտնեց, որ իր կառավարությունը մտադիր է վերանայել Հարավ-Աֆրիկյան հանրապետության և Իսրայելի հետ հարաբերությունները, մասնավորաբար, դադարեցնել նավթի մատակարարումն այդ երկրներին։ Նա հայտնեց նաև, որ կառավարությունը ձգտելու է հարաբերություններ զարգացնել մուսուլմանական և հարևան պետությունների հետ[33]։

Բախթիարի կառավարության ծրագիրը, որը մշակված էր որոշակի դիտավորությամբ, անշուշտ, ավելի քան հավակնոտ էր, և, երկրում տիրող իրադրության պայմաններում, միանգամայն անիրականանալի։ Այն, ինչպես և պետք էր սպասել, հավանության չարժանացավ Ազգային ճակատի և ընդդիմադիր մյուս կազմակերպությունների կողմից, քանի որ խոստումների երկար և հրապուրիչ շարանում բացակայում էր ամենակարևորը՝ միապետության վերացման հարցը։

Բախթիարի կառավարության կազմումը որևէ չափով չնպաստեց երկրում լարվածության թուլացմանը։ Ավելին, միապետությունը փոր-

կելու իր չքողարկված միտումով այն էլ ավելի գրգռեց օպոզիցիային, որը համառորեն պահանջում էր շահի հրաժարումը գահից։

Ի վերջո, ժողովրդական հզոր շարժման ճնշման տակ 1979 թ. հունվարի 10-ին Մուհամմադ Ռեզա Փեհլևի շահն ստիպված եղավ երկրից հեռանալ[34]։ Սակայն նրա այդքան սպասված մեկնումը ևս անկարող էր զսպել ժողովրդական շարժման ալիքը և վերջնական հաղթանակի հասնելու ընդդիմադիր ուժերի վճռականությունը։ Շահի մեկնումն իրավացիորեն գնահատելով որպես իրանական ժողովրդի պահանջներից մեկի իրականացում[35], Ազգային ճակատի ղեկավար Սանջաբին զգուշացնում էր, որ այդ, իրոք մեծ հաջողությունը «...չպետք է ստիպի մոռանալ այն երկար ճանապարհի մասին, որը դեռ առջևում է»[36]։ Ազգային ճակատը խոստանում էր «...շահի դինաստիայի և ամերիկյան կապիտալի շահերն արտահայտող ներկայիս կառավարության դեմ պայքարը շարունակել այնքան ժամանակ, մինչև այն կտապալվի»[37]։ Նույնանման բովանդակություն ուներ նաև Ֆրանսիայում գտնվող հոգևոր առաջնորդ այաթոլլա Խոմեյնիի՝ Իրանի ժողովրդին ուղղած դիմումը[38]։

Բախթիարը, սակայն, իշխանությունը պահպանելու հուսահատ ճիգեր էր գործադրում։ Նրա խնդրանքով հունվարի 24-ին հրավիրվեց մեջլիսի արտակարգ նիստ, որը պետք է քննարկեր ՍԱՎԱՔ-ի ցրման, ինչպես նաև պաշտոնական դիրքի չարաշահման և կոռուպցիայի մեջ մերկացված պետական ծառայողներին դատական պատասխանատվության ենթարկելու հարցերը[39]։

Նրա այս հապճեպ միջոցառումն այլ բան չէր, քան օպոզիցիայի նուրբ զգացմունքների վրա ազդելու և նրան սիրաշահելու նպատակով արված ուշացած մի ժեստ, որը, սակայն, սպասված տպավորությունը չթողեց։

Անհաջողության հանդիպեց նաև օպոզիցիայի հետ քաղաքական կոմպրոմիս ձեռք բերելու համար Խոմեյնու հետ բանակցելու Բախթիարի փորձը, քանի որ Խոմեյնին կտրականապես հրաժարվեց նրան ընդունել, պահանջելով, որ նա, նախ, հրաժարական տա[40]։ «Ներկայիս կառավարությունը, որն ստեղծվել է շահի ցուցումով՝ երկրում կառավարման միապետական սիստեմի պահպանման նպատակով, այսօր այլ ելք չունի, քան հրաժարական տալ»,—մամուլի կոնֆերանսում հայտարարեց օպոզիցիայի ներկայացուցիչ Մեհդի Բազարգանը[41]։

1979 թ. փետրվարի 1-ին այաթոլլա Խոմեյնին երկարատև վտարանդիությունից վերադարձավ հայրենիք[42]։ Իրանական ժողովրդի ամենալայն զանգվածները նրան ցնծությամբ դիմավորեցին։ Հենց Մեհրաբադ օդանավակայանում արած իր հայտարարության մեջ Խոմեյնին օպոզիցիայի բոլոր ուժերին կոչ էր անում համախմբվել՝ Իրանում միապետական կարգերը, ինչպես նաև շահի դրածո Բախթիարի կառավարությունը տապալելու համար[43]։ Ազգային ճակատն շտապեց հավաստիացնել, որ պատրաստ է հոգևորականության և ազգային-հայրենասիրական մյուս բոլոր ուժերի հետ միասին այսուհետև ևս վճռականորեն պայքարել հեղափոխության վերջնական հաղթանակի համար[44]։

Իզուր չէր, որ Բախթիարին այդքան անհանգստացնում էր Խոմեյնիի վերադարձը, և նա այդքան ջանքեր էր գործադրում արգելելու նրա մուտքն Իրան։

Այսուհանդերձ, չնայած ավելի քան ակնհայտ էր, որ իր կառավարությունն այլևս որևէ հեռանկար չունի, Բախթիարը համառորեն հրաժարվում էր իշխանությունից հեռանալ։

Փետրվարի 5-ին Խոմեյնին հայտարարեց Իրանի ժամանակավոր հեղափոխական կառավարության ստեղծման մասին և պրեմիեր-մինիստր առաջադրեց Ազգային ճակատի ղեկավարներից մեկին՝ Մեհդի Բազարգանին[45], որը տարիներ շարունակ համագործակցել էր նրա հետ և վայելում էր նրա վստահությունը։ «Բազարգանի անցումնային կառավարությունը,—ասաց Խոմեյնին մամուլի կոնֆերանսում,—պետք է գործի մինչև Իրանի Իսլամական հանրապետության հռչակումը։ Այն կնախապատրաստի և կանցկացնի նոր պառլամենտի ընտրություններ, որն, իր հերթին, կընդունի Իսլամական հանրապետության նոր Սահմանադրությունը»[46]։ Ժամանակավոր հեղափոխական կառավարության կազմի մեջ մտան Ազգային ճակատի ղեկավարներ Քարիմ Սանջաբին և Դարիուշ Ֆորուհարը, ինչպես նաև բուրժուական այլ կուսակցությունների գործիչներ։

Երկրում, փաստորեն, ստեղծվել էր երկիշխանություն, քանի որ Բազարգանի կառավարության կողքին դեռևս պահպանվում էր Բախթիարի կառավարությունը, որը հենվում էր բանակի վրա, և որն ամեն առիթով սպառնում էր անհրաժեշտության դեպքում դիմել նրա օգնությանը։ (Ավելորդ չէ նշել, որ Միացյալ Նահանգները ևս, որը միանգամայն որոշակի հույսեր էր կապում Բախթիարի կառավարության հետ, հեռանկարում, նրա տապալման դեպքում, չէր բացառում ռազմական հեղաշրջում իրականացնելու հնարավորությունը)։

Այս անգամ արդեն Բախթիարը փորձում էր բանակցությունների մեջ մտնել Բազարգանի հետ՝ երկու հակառակորդ ուժերի միջև «համագործակցություն» կարգավորելու հնարավորությունները քննարկելու նպատակով։ Նա նույնիսկ խոստանում էր, ժողովրդական հուզումները դադարեցնելու պայմանով, համաձայնել Իրանի ապագա քաղաքական կարգի որոշման համար հանրաքվեի անցկացման[47]։

Սակայն դեպքերի հետագա, անսպասելի ընթացքն ինքնըստինքյան վճռեց իշխանության հարցը։ Փետրվարի 9-ի գիշերը շահական գվարդիայի ստորաբաժանումները հարձակում գործեցին ռազմա-օդային ուժերի՝ Թեհրանից ոչ հեռու տեղակայված Ֆարահաբադ մարդական բազայի վրա՝ հաշվեհարդար տեսնելու այն զինվորականների հետ, ովքեր մասնակցել էին ժողովրդական ելույթներին[48]։ Այս ակտն առաջ բերեց օպոզիցիայի ուժերի բուռն հակազդեցություն, և նրանց դիմադրությունը, փաստորեն, վերածվեց զինված ապստամբության։

Այս պարագայում, սթափ կերպով գնահատելով ստեղծված իրադրությունը, Իրանի զինված ուժերի ղեկավարությունը նպատակահարմար գտավ այլևս չմիջամտել իրադարձություններին. փետրվարի 11-ին Բարձրագույն ռազմական խորհուրդը որոշում կայացրեց քաղաքական հակադիր ուժերի բախման մեջ բանակի չեզոքության մասին[49]։ Իսկ մեկ օր անց Իրանի զինված ուժերի Գերագույն շտաբը, կայսերական գվարդիան և առանձին զորամասեր անցան հեղափոխության կողմը[50]։

Բախթիարին, որը զրկվել էր իր հիմնական հենարանից, այլ բան չէր մնում, քան հրաժարական տալ[51]։

Փետրվարյան զինված ապստամբությունը հաղթանակեց, իշխանությունը երկրում, այս անգամ արդեն ամբողջապես, անցավ Բազարգանի գլխավորած ժամանակավոր կառավարությանը։ Փետրվարի 12-ին Բազարգանը ռադիոյով իր ելույթում հայտնեց, որ Իրանի ողջ զինված ուժերը միահամուռ կերպով միացել են ժողովրդին, և որ միապետությունը վերջնականապես տապալվել է[52]։

Փետրվարի 14-ին ՍԱՎԱՔ-ը պաշտոնապես լուծարքի ենթարկվեց[53]։

Փետրվարյան զինված ապստամբության հաղթանակն, անտարակույս, պետք է գնահատել որպես 1978—79 թթ. իրանական հեղափոխության ամենակարևոր նվաճումներից մեկը, որը, միաժամանակ, սկզբնավորեց նրա զարգացման որակապես նոր փուլը։

Օգտվելով համաժողովրդական աջակցությունից և հաջողությամբ դիմակայելով հակահեղափոխական ուժերի անընդհատ ոտնձգություններ-

ին, Բաղարգանի ժամանակավոր կառավարությունն սկսեց իրականացնել իր քաղաքական գիծը, որն ընդգծված դեմոկրատական և հակիմպերիալիստական ուղղվածություն ուներ։

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ներքին քաղաքականության ընդգավառում կառավարության առաջնահերթ խնդիրներից մեկը պետական ապարատի վերջնական զտումն էր պրոշահական տարրերից և սոցիալ-տնտեսական ու քաղաքական վերափոխումների իրականացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը։

Ինչ վերաբերում է արտաքին քաղաքականությանը, ապա կառավարության առաջին իսկ միջոցառումներն անթերկբայորեն վկայում էին ազգային անկախության ապահովման ու պահպանման նրա հաստատ մտադրության մասին։

Մարտի 13-ին Բաղարգանի կառավարությունը պաշտոնապես հայտարարեց ՍԵՆՏՕ ագրեսիվ բլոկից Իրանի դուրս գալու մասին[54]։ Ավելի ուշ կառավարությունը շեղյալ հայտարարեց Արևմուտքի հետ իր բոլոր ռազմական պայմանագրերը։ Նա հրաժարվեց նաև Մերձավոր Արևելքում իմպերիալիզմի ժանդարմի իր ավանդական դերից և հավաստիացրեց, որ բոլոր, հատկապես հարևան երկրների նկատմամբ Իրանի դիրքորոշումն, այսուհետև, լինելու է միայն բարեկամական[55]։

Կառավարությունը պաշտոնապես հայտարարեց Իսրայելի հետ բոլոր տեսակի հարաբերություններն ընդհատելու մասին[56]։ Դիվանագիտական կապերը խզվեցին նաև Հարավ-Աֆրիկյան Հանրապետության հետ[57]։

Ուշագրավ էր Բաղարգանի կառավարության նավթային քաղաքականությունը։ Հայտնի է, որ հեղափոխական իրադրության պայմաններում, հատկապես նավթագործ բանվորների տևական գործադուլների և մի շարք այլ հանգամանքների պատճառով նավթի հանույթն ու արտահանությունը չափազանց կրճատվել էր։ Արդեն փետրվարի վերջերին պրեմիեր-մինիստրի տեղակալ Յազդին հայտարարեց, որ կառավարությունը ամենամոտ ժամանակներս կարգավորելու է նավթի արտահանությունը, և որ դրանից ստացվող եկամուտներն այլևս չեն ծախսվելու զենք գնելու նպատակով[58]։

Կառավարությունը մտադիր էր պետական մենաշնորհ սահմանել նավթի վաճառքի վրա և նավթը վաճառել բացառապես Իրանական ազգային նավթային Ընկերության, և ոչ խոշոր ընկերությունների միջազգային Կոնսորցիումի միջոցով[59]։

Համաձայն իրանական մամուլի հաղորդած տեղեկությունների, կառավարությունը չեղյալ էր հայտարարում Արևմուտքի երկրների հետ շահի կառավարությունների կնքած բարտերային պայմանագրերը, որոնք նախատեսում էին նավթի փոխանակումը զենքի հետ[60]։

Մարտի 30-ին սկսվեց Իրանի պետական կարգի որոշման նպատակով հանրաքվեի անցկացումը։ Ժողովրդի ճնշող մեծամասնությունը քվեարկեց երկրում Իսլամական հանրապետություն հաստատելու օգտին[61]։

Ազգային ճակատի, Իրանի ժողովրդական կուսակցության և առաջադեմ այլ կազմակերպությունների՝ ժողովրդին ուղղած դիմումներում նշվում էր, որ Իրանը թևակոխել է պատմական զարգացման նոր փուլ, որի ընթացքում պետք է իրականացվեն սոցիալ-տնտեսական և քաղաքական վաղուց հասունացած բարեփոխություններ, և պետք է ամրապնդվի ազգային անկախությունը։

Սակայն շատ շուտով պարզորոշ կերպով ի հայտ եկան հակաշահական պայքարում միասնաբար հանդես եկած աշխարհիկ և հոգևոր օպոզիցիայի միշև գոյություն ունեցող, սակայն մի շարք հանգամանքների բերումով հեղափոխության նախորդ փուլերում վառ արտահայտություն չգտած հակասություններն ու տարաձայնությունները։ Ձնայած հենց այս փուլում հատկապես ցանկալի ու անհրաժեշտ էր ազգային բոլոր ուժերի միասնության պահպանումը՝ ներքին հակահեղափոխության և օտարերկրյա իմպերիալիստական աճող ոտնձգություններից հեղափոխության նվաճումները պահպանելու և հեղափոխության վերջնական նպատակի իրականացման համար։

Իսլամական հանրապետության ստեղծումից հետո հոգևոր շրջանները սկսեցին վարել աշխարհիկ դեմոկրատական կազմակերպություններին ասպարեզից դուրս մղելու քաղաքականություն։ Համաձայն նոր Սահմանադրության, գերագույն իշխանությունն Իրանում, ըստ էության, անցավ բարձրաստիճան հոգևորականությանը, որի ներկայացուցիչները և գլխավորում էին Իսլամական հեղափոխական խորհուրդը, կառավարական և պետական մյուս մարմինները։ Դնալով ավելի մեծ ազդեցություն էին ձեռք բերում «Իսլամական հեղափոխության պահապանները» («փասդարները») և տեղական իսլամական կոմիտեները։

Իրադրությունն այնպիսին էր, որ ժամանակավոր հեղափոխական կառավարության արտաքին գործերի մինիստր Ֆարիմ Սանջաբին գերադասեց հրաժարական տալ[62]։ Ապրիլի 18-ին կազմակերպած մա-

մուլի կոնֆերանսում, անդրադառնալով կառավարության գործունեությունը խոչընդոտող հանգամանքներին, Սանջարին, շահի ռեժիմի տնտեսական, բաղաքական և վարչական սիստեմի մնացուկների պահպանման, կառավարության գործերին ՍԱՎԱՔ-ի և օտարերկրյա հետախուզության գործակալների միջամտության և ուրիշ պատճառների հետ միասին հավասարապես վնասակար համարեց և այն, որ առանձին խմբավորումներ, մասնավորաբար Իսլամական հեղափոխական կոմիտեները հաճախ անտեսում են կառավարության որոշումները և կամայականություն են դրսևորում[63]։

Եվ իրոք, հեղափոխության հիշյալ փուլում Խոմեյնու կողմից նշանակված ժամանակավոր կառավարության գործունեության շրջանակները առավել չափով սահմանափակված էին և, Բազարգանի իսկ խոստովանությամբ, բազմաթիվ կազմակերպություններ և քաղաքական խմբավորումներ դրեթե չէին ենթարկվում կենտրոնական կառավարությանը և դուրս էին նրա հսկողությունից[64]։ Իրավիճակով լրջորեն անհանգստացած Բազարգանը հուլիսի 5-ին հեռուստատեսությամբ իր ելույթում ուղղակի հայտարարեց, որ իր կառավարության առջև դրված նպատակները հնարավոր չի եղել իրականացնել գլխավորապես այն բանի հետևանքով, որ «հեղափոխական կոմիտեները մշտապես անարգել միջամտում են կառավարության գործերին և առաջ են քաշում «հակասական պահանջներ»[65]։

Պատահական չէ, որ այս շրջանում Բազարգանի բազմաթիվ ելույթների հիմնական թեման կառավարության և Իսլամական հեղափոխական խորհրդի բացահայտ անհամաձայնությունն էր՝ իր ամենատարբեր արտահայտություններով։ Նա չէր դադարում արձանագրել այն իրողությունը, որ կառավարության և Իսլամական հեղափոխական խորհրդի փոխհարաբերություններում գոյություն ունեն մի ամբողջ շարք պրոբլեմներ, և որ առկա է «վերջինիս չափից դուրս միջամտությունը պետական գործերին»[66]։

Նոյեմբերի 6-ին Բազարգանը հրաժարական տվեց[67]։ Պետական բոլոր գործերի վարումը Խոմեյնին հանձնարարեց Հեղափոխական խորհրդին, որի վրա էր դրվում նաև սահմանադրություն ընդունելու համար հանրաքվեի անցկացման նախապատրաստությունը, պրեզիդենտի և մեջլիսի ընտրությունները։

Իսլամական հեղափոխական խորհրդի նիստում կայացված որոշման համաձայն խորհուրդն իր վրա էր վերցնում երկրի կառավարման

գործը, իսկ հրաժարական տված պրեմիեր-մինիստր Բազարգանի կառավարության անդամները առայժմ պետք է շարունակեին իրենց պարտականությունների կատարումը՝ Իսլամական հեղափոխական խորհրդի անմիջական հսկողության տակ[68]։

Բազարգանի հրաժարականով 1978—79 թթ. իրանական հեղափոխության մեջ ազգային բուրժուազիայի Ազգային ճակատ կազմակերպության մասնակցությունն, իրականում, ավարտվեց։ Այն, նախ և առաջ, տրամաբանական հետևանքն էր հեղափոխության մեջ հոգևոր և լիբերալ բուրժուական ուժերի կոնֆլիկտի, ուժեր, որոնք իրենց սոցիալ-տնտեսական և քաղաքական ըմբռնումների տարբերությամբ հանդերձ, հավասարապես ձգտում էին պետական և տնտեսական գերիշխանության։

Իսլամական ղեկավարները լավ էին գիտակցում, որ դեմոկրատիայի պայմաններում ազգային բուրժուազիան իր տնտեսական առավելության բերումով ժամանակի ընթացքում դուրս կմղեր կրոնական գործիչներին նաև պետական իշխանությունից։ Այդ պատճառով էլ հեղափոխության զարգացման որոշակի փուլում համագործակցելով ազգային բուրժուազիայի կազմակերպության՝ Ազգային ճակատի հետ, և հաջողությամբ օգտագործելով նրա լիբերալ-բուրժուական միտումները, Իսլամական հանրապետության հաստատումից հետո անցան նրան մեկուսացնելու քաղաքականության։

Մյուս կողմից, Ազգային ճակատը, որն սկզբնապես նույնիսկ ակնկալում էր ժողովրդական շարժման ղեկավարությունն իր ձեռքը վերցնել, հաջողության չհասավ, քանի որ հոգևոր օպոզիցիայի համեմատությամբ հեղափոխության մեջ նրա նպատակներն առավել սահմանափակ էին, որը և նրան դրկեց ժողովրդական լայն զանգվածների աջակցությունից։ «Ազգային ճակատը և Սանջաբին այսօր այնպիսի վիճակում են,—ասում էր Իրանի ժողովրդական կուսակցության քարտուղար Ն. Քիա-Նուրին Իսլամական հանրապետության հաստատման նախօրյակին,—որ նրանց պաշտպանող ուժերը հեռացան նրանցից։ Նրանք իրենց քաղաքական կշիռը միանգամայն կորցրել են և նրանց միայն անունն է մնացել»[69]։

Հետագայում, Իսլամական Հանրապետության քաղաքականությունն իր բնույթով ընդհանրապես բացառեց Ազգային ճակատի ակտիվության վերականգնման որևէ հնարավորություն։

А. Г. СТАМБОЛЦЯН

УЧАСТИЕ НАЦИОНАЛЬНОГО ФРОНТА В ИРАНСКОЙ РЕВОЛЮЦИИ 1978—1979 гг.

Резюме

Изучение и освещение вопросов, касающихся участия организации национальной буржуазии Ирана—Национального Фронта в иранской революции 1978—1979 гг. в качестве одной из основных оппозиционных сил, имеет безусловно важное значение.

Претендуя первоначально на роль руководителя народного движения, Национальный Фронт, на определенном этапе развития революционных событий, в силу ряда обстоятельств был вынужден прекратить свою деятельность.

1 احمد ملکی، تاریخچهٔ جبههٔ ملی، تهران، ۱۳۳۲، ص ۱۷

2 A. Faroughy, J. L. Reverier, L'Iran contre le Chah. Paris, 1979. p. 167.

3 P. Balta, Cl. Rulleau, L'Iran insurge. 1789 en Islam? Paris, 1979, p. 181.

4 H. Fürtig, The Upswing and the Reformation of Petty-Bourgeois and Democratic, Bourgeois and Religious Opposition Groups and Organizations in the 1970 as a Basic Precondition for the Eruption of the People's Anti-Monarchist Revolution in 1976 79—„Iran: From Monarchy to Republic", Berlin, 1983, p. 17.

5 С. Л. Араев, Иран в прошлом и настоящем. М., 1981, с. 192.

6 H. Fürtig, *նշվ. աշխ., էջ 17։*

7 Նույն տեղում, էջ 18։

8 „اطلاعات". 28.XI.1978.

9 „اطلاعات", 6.XI.1978.

10 H. Fürtig, նշվ. աշխ., էջ 19։

11 Նույն տեղում։

12 Նույն տեղում։

13 „اطلاعات", 15.XI.1978.

14 «Правда». 13.XI.1978.

15 P. Balta, Cl. Rulleau, *նշված աշխ., էջ 64։*

16 «Правда». 15.XII.1978.

17 «Правда». 15.XII.1978.

18 «Правда». 26.XII.1978

19 F. Hoveyda, The Fall of the Shah. New York, 1980, p. 192.

20 Նույն տեղում, էջ 193։

21 H. Nahavandi, Iran. Deux rêves brisés. Paris. 1981, p. 189.

22 F. Hoveyda, *նշված աշխ.*, *էջ 195։*
23 E. Abrahamian. Iran Between Two Revolutions. Princeton-New Jersey, 1982, p. 524.
24 H. Nahavandi, *նշված աշխ.*, *էջ 203։*
25 „اطلاعات", 6.1.1979.
26 „اطلاعات", 6.1.1979.
27 „اطلاعات", 6.1.1979.
28 «Правда», 3.I.1979.
29 „اطلاعات", 6.1.1979.
30 «Правда», 5.I.1979.
31 «Правда», 6.I.1979.
32 „اطلاعات", 11.1.1979
33 „اطلاعات", 11.1.1979.
34 „اطلاعات", 16.1.1979
35 „اطلاعات", 16.1.1979.
36 «Правда», 21.I.1979.
37 «Правда», 22.I.1979.
38 «Правда», 22.I.1979.
39 „اطلاعات", 24.1.1979.
40 F. Hoveyda, *նշված աշխ.*, *էջ 203։*
41 „اطلاعات", 24.1.1979.
42 „اطلاعات", 1.11.1979.
43 „اطلاعات", 1.11.1979.
44 „اطلاعات", 1.11.1979.
45 „اطلاعات", 5.11.1979
46 „Правда", 7.11.1979.
47 „اطلاعات", 8.11.1979.
48 „اطلاعات", 10.11.1979.
49 „اطلاعات", 11.11.1979.
50 „اطلاعات", 12.11.1979.
51 «Правда», 14.II.1979.
52 «Правда», 14.II.1979.
53 «Правда», 14.II.1979.
54 «Правда», 15.III.1979.
55 „اطلاعات", 1.X.1979.
56 «Правда», 20.II.1979.
57 «Правда», 6.III.1979.
58 «Правда», 24.II.1979.
59 «Правда», 29.II.1979.
60 „کیهان", „اطلاعات", „Tehran Journal", 28.III·1979
61 „اطلاعات", 31·III·1979.
62 „اطلاعات", 16·IV·1979.

63 „اطلاعات", 18.IV.1979.
64 „اطلاعات", 30.V.1979.
65 «Правда», 6.VII.1979.
66 «Правда», 27.IX.1979.
67 „اطلاعات", 6.XI.1979.
68 „اطلاعات", 6.XI.1979.
69 نورالدین کیانوری، حزب توده ایران چه میگوید، تهران ۱۹۸۰، ص. ۵۲